

# ՁԵՐ ԲՈՂՈՔԻ ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱԽՈՒՆՔՆԵՐԸ

Որպես Քալիֆորնիոյ տարեկան արտոնագիր ունեցող կամ դիմորդ...

**Դուք կրնաք բողոքի դիմում ներկայացնելու իրաւունք ունենալ, եթէ Կանեփի վերահսկման բաժանմունքը (DCC) ընդունած է անբարենպաստ որոշում մը, օրինակ՝**

- Մերժած է ձեր տարեկան արտոնագիրի դիմումը:
- Դադրեցուցած, չեղեալ յայտարարած կամ չեղարկած է ձեր արտոնագիրը:
- Ձեր արտոնագիրին համար փորձաշրջան տուած է:
- Ձեր արտոնագիրին վրայ պայման դրած է, օրինակ՝ աշխատանքային ժամերու սահմանափակումներ կամ համապատասխանութեան հետ կապուած հաշուետուութիւններ, և այլ բաներ:
- Տուգանքի կամ պատիժի ենթարկած է ձեր արտոնագիրը:

**Խորհրդակցեցէք փաստաբանի մը հետ, եթէ հարցումներ ունիք, թէ արդեօք ձեր տարեկան արտոնագիրին դէմ տրուած որոշումին նկատմամբ կարելի՞ է բողոքի դիմում ներկայացնել:**



## Ի՞նչ է Կանեփի վերահսկման բողոքի պահանջներու յանձնաժողովը (CCAP):

CCAP-ն մօտաւորապէս դատական յանձնաժողով մըն է, որ լիազօրուած է վերանայելու DCC-ի որոշումները: Յանձնաժողովի անդամները կը նշանակուին Կառավարիչին և օրէնսդիր մարմինին կողմէ: և կը հանդիսանան որպէս դատաւորներ՝ բողոքի պահանջներու քննութեան ժամանակ:



## Ի՞նչպէ՞ս կրնամ բողոքի դիմում ներկայացնել:

Այցելեցէք CCAP-ի կայքէջը՝ [www.ccap.ca.gov](http://www.ccap.ca.gov), բողոքի դիմում ներկայացնելու վերաբերեալ ցանկի մը, իրաւական եզրերու բառարանի և բողոքի դիմում սկսելու համար պահանջուած ձևաթուղթերուն համար: Բացի անկէ, կայ յաճախակի տրուող հարցումներու (ՅՏՀ) բաժին՝ բողոքի դիմում մը սկսելու, համաօտագիրներու, լսումներու և այլ ընթացակարգային հարցումներու վերաբերեալ:



## Ի՞նչ կը պատահի, երբ ես բողոքի դիմում ներկայացնեմ:

CCAP-ն կը վերանայի կարգապահութեան իրաւական հիմքերը և այս պարագայի դիմումին մէջ ներկայացուած բոլոր ապացոյցները և կը կայացնէ որոշում մը: CCAP-ն կրնայ չեղարկել DCC-ի որոշումը, և այս ձևով ձեր արտոնագիրին կամ արտոնագիրի դիմումին դէմ եղած որոշումը կը չեղարկուի: Որպէս այլընտրանք, CCAP-ն կրնայ հաստատել DCC-ի որոշումը՝ ուժի մէջ ձգելով որևէ կարգապահական որոշում կամ արտոնագիրի դիմումի մերժում:



## Որո՞ւ հետ կրնամ կապուիլ, եթէ հարցումներ ունիմ:

CCAP-ի աշխատակիցները կրնան պատասխանել բողոքի պահանջի գործընթացին վերաբերեալ հիմնական հարցումներուն, սակայն չեն կրնար տրամադրել իրաւաբանական խորհրդատուութիւն: Դուք կրնաք կապուիլ CCAP-ի գրասենեակին, հեռաձայնելով՝ **(916) 322-6870 թիւին**, կամ ե-նամակով՝ [info@ccap.ca.gov](mailto:info@ccap.ca.gov):

Աւելի բարդ հարցումներու կամ ձեր պարագային հետ առնչուած հարցումներու համար, դուք պետք է խորհրդակցիք փաստաբանի մը հետ, որ լաւատեղեակ է Քալիֆորնիոյ կանեփի արտոնագրման մասին օրէնքէն:



Այցելեցէք [www.ccap.ca.gov](http://www.ccap.ca.gov) կամ գործածեցէք վերոնշեալ QR քոդը:

